580 Աստված Քեզ ուղարկեց ինձ համար,

1. Աստված Քեզ ուղարկեց ինձ համար,
Աշխարհում ծնվեցիր ինձ համար,
Եկար, մարմին հագար ինձ համար,
Հիսո՛ւս,Դու մարդացար ինձ համար:

Միայն Քեզ պաշտել եմ ուզում ես, Տե՛ր,
Խոսքիդ մեջ ապրել եմ ուզում ես, Տե՛ր,
Սիրուդ մեջ մնալ եմ ուզում ես, Տե՛ր,
(Միայն) Քեզ հետ ես լինեմ:

2. Հալածանք Դու տարար ինձ համար,
Անարգանք կրեցիր ինձ համար,
Խաչին Դու գամվեցիր ինձ համար,
Սուրբ արյուն թափեցիր ինձ համար:

3. Թողել եմ աշխարհը Քեզ համար,
Ապրում եմ ես միայն Քեզ համար:
Նոր երգեր եմ երգում Քեզ համար,
Փառքեր եմ ես բերում Քեզ համար: